«Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագիր» դրամաշնորհային օգնության հանձնման արարողությունը

(Տոյոտա մակնիշի 39 շտապօգնության մեքենաների հանձնումը ՀՀ առողջապահության նախարարությանը)

2022 թ.-ի նոյեմբերի 22-ին Երևանի Այրվածքաբանության ազգային կենտրոնի բակում տեղի ունեցավ «Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագիր» դրամաշնորհային օգնության հանձնման արարողությունը, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հանձնվեցին վերջին սերնդի 39 Տոյոտա մակնիշի շտապօգնության մեքենաներ:

400 միլիոն ճապոնական իեն (շուրջ 3,7 միլիոն ԱՄՆ դոլար) արժողությամբ այս ծրագրի հայտագրերի փոխանակումը ստորագրվել է Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև 2020 թվականի հունիսին՝ նպատակ ունենալով պայքարել ՔՈՎԻԴ-19 համաճարակի դեմ:

Արարողությունը տեղի ունեցավ ՀՀ վարչապետ Ն.Գ. պարոն Նիկոլ Փաշինյանի, առողջապահության նախարար Ն.Գ. տիկին Անահիտ Ավանեսյանի, Հայաստանում Ճապոնիայի դեսպան ՖՈՒԿՈՒՇԻՄԱ Մասանորիի ներկայությամբ: Արարողությանը մասնակցում էին նաև ճապոնական կողմից Քրաուն Էյջնթս Ճապոնիա կազմակերպության ծրագրային գործառնությունների ավագ տնօրեն տիկին ՅՈՆԵՄԻՉԻ Ռիցուկոն, իսկ հայկական կողմից Երևանի փոխքաղաքապետներ պարոն Տիգրան Ավինյանը և պարոն Գևորգ Սիմոնյանը, պատգամավոր և նախկին առողջապահության նախարար պարոն Արսեն Թորոսյանը, «Տոյոտա Երևան» կազմակերպության գլխավոր տնօրեն պարոն Վահե Գզրարյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ և ներգրավված կառույցների ներկայացուցիչներ:

Արարողության ընթացքում նախարար տիկին Ավանեսյանը հանդես եկավ ելույթով, ողջունեց հյուրերին և իր երախտագիտությունը հայտնեց Ճապոնիայի կառավարությանն ու ժողովրդին, որից հետո ելույթ ունեցավ դեսպան Ֆուկուշիման՝ շնորհավորելով ծրագրի հաջողության առիթով: Արարողությանը հաջորդեց շրջայցը, որի ընթացքում նախարար տիկին Ավանեսյանը բարձրաստիճան պաշտոնյաներին, այդ թվում՝ վարչապետ պարոն Փաշինյանին, ներկայացրեց շտապօգնության մեքենաների զինվածությունը:

Արարողությունն ավարտվեց դեսպան Ֆուկուշիմայի կողմից նախարար տիկին Ավանեսյանին շտապօգնության մեքենայի բանալու հանձնմամբ:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Նախարար տիկին Ավանեսյանի ելույթը

Դեսպան Ֆուկուշիմայի և վարչապետի ձեռքսեղմումը

Բանալու հանձնումը

Երևանի փոխքաղաքապետ պարոն Ավինյանի ելույթը

Արարողության մասնակիցները

Տոյոտա մակնիշի շտապօգնության մեքենաները

Շտապօգնության մեքենաների հագեցվածությունը